ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2025 ԹՎԱԿԱՆ

ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2025 թվականի գործունեության կատարողականի գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1 Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2024թ.	2025թ.
1	Դեղերի շրջանառություն	8.0	9.5
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0.2	0.5
3	Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	4.4	4.3
4	Աշխատանքային իրավունք	7.0	9.7
5	Աշխ. անվտանգություն	5.3	5.2

1.2 Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2024թ.	2025թ.
1	Դեղերի շրջանառություն	8	9.5
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0.1	0.4
3	Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	4	4.3

4	**Աշխատանքային իրավունք**	7	9.7
5	**Աշխ. անվտանգություն**	5.3	5.2

1.3 Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները[1].

Ռիսկի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված մարդկային ռեսուրսները ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության կադրային ներուժն է, իսկ ֆինանսական միջոցները՝ վերջիններիս աշխատավարձերը և խրախուսումները: Այլ լրացուցիչ ֆինանսական հատկացումներ տարվա ընթացքում չեն եղել:

Տեսչական մարմնի հաստիքացուցակով վարչությանը հատկացված է 9 հաստիք՝ 1 վարչության պետի, 7 գլխավոր մասնագետի և 1 առաջատար մասնագետի:

Ներկայումս թափուր են գլխավոր մասնագետի 3 հաստիքները:

1.4 Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Տարվա ընթացքում իրականացվել է 10939 իրազեկման միջոցառում (2024թ.՝ **8674**): Ըստ վերահսկողության ոլորտների՝

	Դեղերի շրջանառություն		**Բժշկական օգնություն և սպասարկում**		**Սանիտարահամաճ. անվտանգ. ապահովում**		**Աշխատանքային իրավունք**	
	2024	**2025**	**2024**	**2025**	**2024**	**2025**	**2024**	**2025**
Միջոցառումների թիվ*	**114**	**130**	**112**	**238**	**344**	**2494**	**3612**	**3053**

** 5024 միջոցառում ընդհանուր բնույթի է:*

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

[1] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը[2].

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 17 առաջարկություն (2024թ.՝ 26): Միաժամանակ՝ քննարկվել և կարծիք է ներկայացվել տարբեր գերատեսչությունների կողմից մշակված 54 նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ (2024թ.՝ 39):

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.

Ըստ անհրաժեշտության ստուգումների ընդհանուր միջին ցուցանիշը 7.2 օր է (2024թ.՝ 6.1 օր): Ըստ ոլորտների՝

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (օր)	
		2024թ.	2025թ.
1	**Դեղերի շրջանառություն**	8	9.4
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	0.1	7.1
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	4	6.6
4	**Աշխատանքային իրավունք**	7	7.6
5	**Աշխ. անվտանգություն**	5.3	5.5

2.2 Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

	ՈԼՈՐՏ	Ստուգումների ընդհանուր քանակ		Բարձր ռիսկ. ստուգումների քանակ	
		2024	2025	2024	2025
1	**Դեղերի շրջանառություն**	199	121	199(100%)	121(100%)

[2] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում կիսամյակը:

2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	75	54	7(9.3%)	8(14.8%)
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	226	282	226(100%)	282(100%)
4	**Աշխատանքային իրավունք**	184	230	184(100%)	230 (100%)
5	**Աշխ. անվտանգություն**	166	190	166(100%)	190(100%)

2.3 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (օր)	
		2024թ.	**2025թ.**
1	**Դեղերի շրջանառություն**	14.9	13.3
2	**Բժշկական օգնություն և սպասարկում**	3.3	12.3
3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	13.3	12.9
4	**Աշխատանքային իրավունք**	15.2	14.6
5	**Աշխ. անվտանգություն**	13.5	10

2.4 Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր իրականացնել 859 ստուգում, փաստացի հրապարակվել է 859 հանձնարարագիր: Տարեկան ծրագրով նախատեսված ստուգումներից ավարտին է հասցվել թվով 611 ստուգում: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հրապարակվել է 314 վերստուգման հանձնարարագիր, ինչպես նաև 16 ըստ անհրաժեշտության ստուգման հանձնարարագիր: Փաստացի իրականացվել և ավարտվել է 299 վերստուգում և 12 ըստ անհրաժեշտության ստուգում: Ավարտին հասցված 311 վերստուգումների և 611 ստուգումների հարաբերակցությունը կազմում է 0.5:

2.5 Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Հաշվետու տարում ստուգման ենթարկված տնտեսավարող սուբյեկտների կողմից Տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացվել է 2 բողոք:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1 Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը.

Տարեկան ծրագրի համաձայն իրականացված ստուգումներ՝ 859, ըստ անհրաժեշտության ստուգումներ՝ 330 (314 վերստուգում, 16 ըստ անհրաժեշտության ստուգում):

Հարաբերակցությունը 1 : 0.38 է:

3.2 Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը[3] .

2024թ. ստուգումների ծրագրից 7 տնտեսավարող ընդգրկվել է նաև 2025թ. ստուգումների ծրագրում, որոնց մոտ ոլորտում ռիսկայնության խմբի փոփոխություն չի արձանագրվել:

3.3 Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (մարդկային ռեսուրսներ)	
		2024թ.	2025թ.
1	Դեղերի շրջանառություն	3.3	3
2	Բժշկական օգնություն և սպասարկում	0.8	2.6

[3] Այս չափորոշիչի համար հաշվետու ժամանակահատված է համարվում տարին:

3	**Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**	2.7	2.6
4	**Աշխատանքային իրավունք**	2.6	2.7
5	**Աշխ. անվտանգություն**	2.6	2.8

Ստուգման նպատակով իրականացված գործուղումների համար տրամադրվել է 7.012.817 դրամ գումար՝ 398 ստուգման համար (2024թ.՝ 7 077 688 դրամ գումար՝ 472 ստուգման համար):

Մեկ ստուգման համար ծախսված միջին գումարը կազմում է 17 620 դրամ (2024թ.՝ 14 993 դրամ): Ամենաածախսատար գործուղումը կազմել է 284 000 դրամ (2024թ.՝ 400.000 դրամ):

3.4 Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

Տեսչական մարմնի դեմ բերվել է 515 բողոք, որից 165 բողոք՝ Տեսչական մարմին, 350 բողոք՝ դատարան: Ըստ վերահսկման առանձին ոլորտների, պատկերը հետևյալն է.

Ոլորտներ	**Բողոքների ընդհանուր թիվ**		**Այդ թվում՝**			
			Տեսչական մարմին		**Դատարան**	
	2024	**2025**	**2024**	**2025**	**2024**	**2025**
Դեղերի շրջանառություն	170	167	26	29	144	138
Բժշկական օգնություն և սպասարկում	60	59*	40	28*	20	31*
Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	39	60*	21	29*	18	31*
Աշխատանքային իրավունք	223	225*	102	78*	121	147*
Աշխ. անվտանգություն	13	16*	2	7	11	9*
ԸՆԴԱՄԵՆԸ	505	515*	191	165*	314	350*

*1 բողոք՝ 2 ոլորտ:

165 վարչական բողոքից 36-ը բավարարվել է/բեկանվել է (21.8%):

Տարվա ընթացքում կայացվել է 435 վճիռ/որոշում՝ դատական բողոքարկված գործերի վերաբերյալ, որից 250-ը՝ հօգուտ բողոքաբերի (57.5%): 2024թ. կայացվել էր 371 վճիռ/որոշում, որից 237-ի դեպքում՝ հօգուտ բողոքաբերի (64%):

ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am